

ՇԵՂԱԳՐԻ ԵՎ ԹԱՎԱՏԱՌԻ ԳՈՐԾԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐՈՒՄ

Լիլիթ Տիգրանյան

*Երևանի Վ. Բոյուտովի անվ. պետական
լեզվա հասարակագիտական համալսարան*

Վերգրության շեղագիր և թավատառ միջոցները կարևոր դեր են կատարում գեղարվեստական և գիտական տեքստերում. դրանք նպաստում են տեքստի իմաստային կառուցվածքի ձևավորմանը և ապահովում տեքստի արդյունավետ ընկալումն ու հաղորդակցական-գործառական ազդեցությունը: Շեղագրի և թավատառի իրացվող գործառույթները և կիրառման հաճախականությունը տարբեր ձևով է դրսևորվում գեղարվեստական (արձակ և դրամատիկական) և գիտական տեքստերում:

Բանալի բառեր. ոչ խոսքային միջոցներ, վերգրության միջոցներ, շեղագիր, թավատառ, գործառույթներ, կիրառման հաճախականություն, գեղարվեստական և գիտական տեքստեր, հաղորդակցական գործառույթ, սպասարկու-մետատեքստային գործառույթ:

Ներածություն

Գրավոր տեքստերի ոչ խոսքային՝ հարագրության միջոցները գրավել են լեզվաբանների ուշադրությունը դեռ 20-րդ դարի 20-ական թվականներին, սակայն այդ միջոցների համակարգված ուսումնասիրությունը սկսվեց միայն 70-ական թվականներից, երբ լեզվաբաններն անդրադարձան այդ միջոցների արտահայտչական հնարավորությունների ուսումնասիրությանը:

Հարագրության միջոցների համակարգում առանձնացվում են համագրության (կետադրական նշաններ), վերգրության (տառատեսակ, տառաչափ, տառատեսակի խտություն) և տեղագրական (նկարներ, գրաֆիկներ և այլն) գրաֆիկական միջոցներ (Шыгина 1999:10): Համագրության և վերգրության միջոցները, իրացվելով տեքստային մակարդակում՝ միկրոմակարդակում, նպաստում են տեքստի տեղեկատվության ստեղծմանը և վերծանմանը: Տեղագրական միջոցները, ապահովելով տեքստի միայն արտաքին ձևավորումը, գործում են մակրոմակարդակում և չեն անդրադարձնում տեքստի իմաստային կառուցվածքի վրա:

Վերջին տասնամյակներում լեզվաբանները կատարել են կարևոր ուսումնասիրություններ վերգրության միջոցների վերլուծության ոլորտում (Ս. Փաթ, Հ.Ու. Ուոլեր, Օ.Մ. Ադաևա, Ն.Լ. Շուբինա և այլք), սակայն այդ նշանների կիրառմանը վերաբերող որոշ հարցեր դեռ լուծում չեն ստացել, այդ թվում՝ վերգրության միջոցների գործառության առանձնահատկությունները գործառական տարբեր ոճերում և ենթաոճերում:

Վերգրության միջոցների ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմա-

նավորված է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հետ: Վերգրույթային միջոցներից վերլուծության համար ընտրել ենք շեղագիրը և թավատառը, քանի որ մեր հետազոտական նյութի նախնական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այդ նշանների գործառնությունը և կիրառման հաճախականությունը զգալիորեն տարբերվում են գեղարվեստական և գիտական տեքստերում:

Շեղագրի գործառնական առանձնահատկությունները

Լեզվաբանները առանձնացնում են շեղագրի գործառնությունների մասամբ հանրնկնող ցանկեր՝ բառի առանձնացում, օտարալեզու բառի կամ եզրույթի ներմուծում, գրքերի, թերթերի, պիեսների անվանումների նշում և այլն (Carey 1976; McCaskill 1988; Адаева 2003):

Տարբեր աղբյուրներում նշված գործառնությունները բնորոշ են շեղագրի կիրառմանը, սակայն դրանք տարբեր ձևով են դրսևորվում գեղարվեստական և գիտական տեքստերում:

Բացի նշված գործառնություններից՝ հետազոտական նյութի մեր ուսումնասիրությունը ցույց է տվել, որ շեղագիրն ունի նաև ուրիշ՝ այլ հեղինակների կողմից չնշված կիրառություն: Շեղագիրը կիրառվում է հետևյալ դեպքերում.

- *Ուրիշի խոսքը մեջբերելիս*: Շեղագիրը մեջբերումներում առանձնացնում է հիմնական տեքստը ուրիշի խոսքից: Այս գործառնությամբ հանդիպում է գիտական տեքստերում և գեղարվեստական արձակում, սակայն բացակայում է դրամատիկական ստեղծագործություններում: Այսպես՝

A crape bouquet was tied to the door-knocker with ribbon. Two poor women and a telegram boy were reading the card pinned on the crape. I also approached and read:

July 1st, 1895

The Rev. James Flynn (formerly of St Catherine's Church, Meath Street), aged sixty-five years.

R.I.P.

(J. Joyce "Dubliners")

The attitude of the late nineteenth century can be seen in this passage from a *Manual of Our Mother Tongue*:

There are in Great Britain five principal dialects. Distinct and separate errors of pronunciation are peculiar to each dialect, besides which one dialect often contains some of the peculiarities of another.

(Freeborn 1986:10)

Շեղագիրը մեջբերումներում ունի արտահայտման հոմանիշային միջոց՝ այլ տառատեսակ կամ տառաչափ.

And yet there is an undisputed relevance of punctuation, which arises from the sweeping consideration **that** – together with capitalization, for example (a feature which one might add intuitively) – it must be regarded as a basic surface feature of written communication, cf. Cronnell (1980:3) and Gleason (1970 [1955]: 433); or as Irmscher (1979:126) puts it, apparently disagreeing with the common belief of arbitrariness:

Even though writers do not want to be concerned with punctuation, capitalization, and spelling, they have to be because the reader cannot easily do without them. All of the mechanics are signals of one kind or another. Sending out the wrong signals is misdirecting the reader or, more often, momentarily delaying the decoding process. Readers don't like obstacles.

(Patt 2013:1)

Այս օրինակում, բացի տառաչափերի տարբերությունից, ուղղահայաց բացատր նույնպես օգնում է ընթերցողին տարբերելու հեղինակի խոսքը մեջբերումից:

- Հաղորդակցական կենտրոնը նշելիս: Գեղարվեստական արձակում և դրամայում, բացի վերը նշված գործառույթներից, շեղագիրը կիրառվում է ասույթի հաղորդակցական կենտրոնը նշելու համար, ինչը բանավոր խոսքում իրացվում է տրամաբանական շեշտի միջոցով:

“I do not mind his not talking to Mrs. Long,” said Miss Lucas, “but I wish he had danced with Eliza.”

“Another time, Lizzy,” said her mother, “I would not dance with *him*, if I were you.”

“I believe, ma’am, I may safely promise you *never* to dance with him.”

“His pride,” said Miss Lucas, “does not offend *me* so much as pride often does, because there is an excuse for it. One cannot wonder that so very fine a young man, with family, fortune, everything in his favour, should think highly of himself. If I may so express it, he has a *right* to be proud.”

“That is very true,” replied Elizabeth, and “I could easily forgive *his* pride, if he had not mortified *mine*.”

(J.Austin “Pride and Prejudice”)

They sat in the twilight eating toffees and incanting witches’ spells. Jenny said, “There’s a Greek god at the museum standing up with nothing on. I saw it last Sunday afternoon but I was with Auntie Kate and I didn’t have a chance to *look* properly.”

(M. Spark “The Prime of Miss Jean Brodie”)

THOMASINA: It is very difficult, Septimus. You will have to show me how.

SEPTIMUS: If I knew how, there would be no need to ask *you*. Fermat’s last theorem has kept people busy for a hundred and fifty years, and I hope it would keep *you* busy long enough for me read Mr Charter’s poem in praise of love with only the distraction of its own absurdity.

(T. Stoppard “Arcadia”)

Առոգանական սույն գործառույթը իրացվում է նաև վերգրությային այլ միջոցով՝ մեծատառերով, ընդ որում՝ մեր հետազոտությունը ցույց է տվել, որ այս միջոցն օգտագործվել է հիմնականում 19-րդ դարում շեղագրի հետ զուգահեռ:

“Well, then, LET something be done for them; but **THAT** something need not be three thousand pounds. Consider,” she added, “that when the money is once parted with, it never can return. Your sisters will marry, and it will be gone for ever. If, indeed, it could be restored to our poor little boy –”

(J. Austin “Sense and Sensibility”)

Այս օրինակներում շեղագրով նշված բառերը հանդես են գալիս որպես նախադասության հաղորդակցական կենտրոն և բանավոր վերարտադրման դեպքում միջուկային տոնով են ձևավորվում:

Գեղարվեստական արձակում նման կիրառումը հանդիպում է միայն երկխոսական հատվածներում կամ գործող անձանց ներքին խոսքում:

Գիտական տեքստերում առոգանական նման գործառույթը բացակայում է, սակայն կիրառվում է առանձնացման յուրահատուկ տեսողական գործառույթ. առաջին անգամ ներմուծվող եզրույթները հաճախ հանդիպում են շեղագիր գրությամբ: Այս առանձնացումը տեղի է ունենում միայն գրաֆիկական մակարդակում:

• *Օրինակներ ներմուծելիս*: Գիտական տեքստերում հաճախ օրինակները ներմուծվում են շեղագրով՝ նույնիսկ առանց for example բառակապակցության կամ e.g. հապավումի:

The now fashionable pronunciation of several words is to me at least very offensive: *contemplate* is bad enough, but *balcony* makes me sick.

(Crystal 1987:57)

Այս օրինակում նույն բառի սահմաններում օգտագործվում է վերգրույթային երկու միջոց. օրինակը ներմուծվում է շեղագրով, իսկ թավատառով նշվում է բառի շեշտված վանկը:

Չեղինակի՝ նույն տառաատեսակով և տառաչափով ներկայացված խոսքը և օրինակները զգալիորեն բարդացնում են տեքստի ընկալումը, ինչպես ներքոբերյալ օրինակում.

In the following examples, only an over-punctuator would increase the punctuation:

He went home early that day.

He could hardly have done anything else.

He knew all about it.

Quite unconcernedly she continued her knitting.

She said No.

Many compound and some complex sentences require nothing but a full stop. A consideration of the following examples will show the kind of compound sentence where this is permissible and, indeed, correct:

He went home early that day and got the chores finished by seven o'clock.

(Partridge 1953:8-9)

Այս հատվածը ավելի մասշտաբի կլիներ, եթե հեղինակը ինչ-որ միջոցով առանձնացներ օրինակները հեղինակային խոսքից, ինչպես օրինակ՝

In the following examples, only an over-punctuator would increase the punctuation:

He went home early that day.

He could hardly have done anything else.

He knew all about it.

Quite unconcernedly she continued her knitting.

She said No.

Many compound and some complex sentences require nothing but a full stop. A consideration of the following examples will show the kind of compound sentence where this is permissible and, indeed, correct:

He went home early that day and got the chores finished by seven o'clock.

- Հեղինակային նշագրումներում: Դրամատիկական տեքստում շեղագրի կիրառման յուրահատկությունը հեղինակային նշագրումները ձևավորելն է: Շեղագիրը, առանձնացնելով հեղինակային նշագրումները երկխոսությունից, հուշում է ընթերցողին, որ տեքստի այս երկու մասերը հակադրվում են, ծառայում տարբեր նպատակների և տարբեր ընկալում ու մեկնաբանում են պահանջում:

MR TYLER: [*Bitterly.*] Late! I on my bicycle as I bowled along was already late. Now therefore we are doubly late, trebly, quadrapedly late. Would I had shot by you, without a word. [*Dragging feet.*]
(S. Beckett “All That Fall”)

BENTLEY. If you go on doing it after I’ve asked you not, you’ll feel an awful swine. [*He strolls away carelessly to the sideboard with his eye on the sponge cakes.*] At least I should; but I suppose you’ve not so particular.
(B. Shaw “Misalliance”)

Դրամատիկական տեքստերում երկխոսական հատվածների և հեղինակային նշագրումների միջև տպագրային տարբերության բացակայությունը դժվարացնում է տեքստի ընթերցումը, ինչը պարզ երևում է հետևյալ երկու օրինակներից.

GIRL. [*Taking off her hat and veil; her hair is yellowish and crinkly*]
Cheer up! You are not lonely, like me.

YOUNG OFF. [*Limping to the window – doubtfully*] I say, how did you how did you get into this? Isn’t it an awfully hopeless sort of life?
(J. Galworthy “Defeat”)

Թավատառի գործառական առանձնահատկությունները

Թավատառը օգտագործվում է գլուխները և ենթագլուխները առանձնացնելու համար ինչպես գեղարվեստական, այնպես էլ գիտական ոճի տեքստերում: Սակայն նույն գործառույթով երբեմն օգտագործվում են վերգրույթային այլ միջոցներ՝ նույն տառատեսակի մեծատառերը, այլ տառատեսակները կամ ցրիվ շարվածքը:

Wuthering Heights CHAPTER I

1801. – I have just returned from a visit to my landlord – the solitary neighbour that I shall be troubled with. This is certainly a beautiful country! In all England, I do not believe that I could have fixed on a situation so completely removed from the stir of society. A perfect misanthropist's heaven: and Mr. Heathcliff and I are such a suitable pair to divide the desolation between us.
(E. Bronte "Wuthering Heights")

Ամբողջ տեքստում օգտագործվում է նույն տառատեսակը (Tahoma) և տառաչափը (10,5), սակայն վերնագրի և ենթավերնագրի թավ գրությունն առանձնացնում է դրանք բուն տեքստից, իսկ մեծատառերի կիրառությունների բազմազանությունը (վերնագրում՝ մեծատառի և փոքրատառերի հերթազայությունը, ենթավերնագրում՝ միայն մեծատառերը) ապահովում է տեքստի տարբեր տարրերի ստորակարգությունը:

Chapter 1. Mr. Sherlock Holmes

Mr. Sherlock Holmes, who was usually very late in the mornings, save upon those not infrequent occasions when he was up all night, was seated at the breakfast table. I stood upon the hearth-rug and picked up the stick which our visitor had left behind him the night before.

(A. Conan Doyle "The Hound of Baskerville")

Այս օրինակում տարբերվում են գլխի վերնագրի և բուն տեքստի ինչպես տառատեսակը (Arial և Verdana), այնպես էլ տառաչափը (14,5 և 10,5) և անգամ գույնը՝ վերնագրի կարմիրը և տեքստի սևը, ընդ որում՝ ավելի խոշոր տառաչափի շնորհիվ վերնագրի տառերի գույնի խտությունը նման է թավ գրության:

Հասկանալի է, որ նման դեպքերում կարևոր է ինչ-որ կերպ առանձնացնել այդ հարազորությամբ միավորը հիմնական տեքստից, իսկ վերգրությամբ միջոցները այս կիրառմամբ զուտ սպասարկու-մետատեքստային գործառույթ են կատարում, քանի որ իմաստային ոչ մի փոփոխություն չի նկատվի նշված լեզվական միավորները հակառակ ձևով կիրառելու դեպքում:

Դրամատիկական ստեղծագործություններում թավատառը կիրառվում է հեղինակային նշագրումներում գործող անձանց անունները նշելու համար: Առանձնացնելով կերպարների անունները պիեսի հիմնական տեքստից՝ թավատառը անմիջապես գրավում է ընթերցողի ուշադրությունը՝ հուշելով, որ դրամայի այդ հատվածները չեն վերաբերում հիմնական երկխոսական տեքստին:

Algernon. Very natural, I am sure. That will do, Lane, thank you.

Lane. sir. [Lane goes out.]

(O. Wilde "The Importance of Being Earnest")

Թավատառի այս գործառույթը նույնպես իրացվում է հոմանիշային տարբեր միջոցներով՝ մեծագիր կամ ցրիվ գրությամբ, առանձին տողով կամ տառաչափի փոփոխումով,

Withers

Mrs. Crosbie. (There is no answer and he knocks again.) Mrs. Crosbie.

Leslie

Yes?

Withers

There's a car on the road. That must be your husband.

(S. Maugham "The Letter")

CARVE. I was afraid I hadn't. But I called and called, and there was no answer. So then I began to argue the point. Why not get up? I'd had a tremendous long sleep. I felt singularly powerful. And I thought you'd gone home.

(A. Bennett "The Great Adventure")

Քաղված երկու օրինակների համեմատությունը ցույց է տալիս, որ հիմնական երկխոսական տեքստից տառաչափով կամ տառատեսակով չտարբերվող հեղինակային նշգրումները զգալիորեն բարդացնում են տեքստի ընկալումը:

Թավատառը ինչպես և հոմանիշային միջոցները հեղինակային նշագրումներում կատարում են սպասարկու-մետատեքստային գործառույթ:

Թավատառը յուրահատուկ ձևով է օգտագործվում գիտական, մասնավորապես գիտաուսումնական ենթաոճում: Այն հանդիպում է միայն այս ենթաոճին բնորոշ մի շարք դեպքերում.

- *Նոր հասկացություն ներմուծելիս:*

A knowledge of phonetics and phonology will help you to study:

accent – social and regional variations in pronunciation can be transcribed exactly;

the history of English – changes in pronunciation can be identified and described accurately; (Thorne 1986:48)

Բերված օրինակում թավատառի գործածությամբ հեղինակը ընդգծում է այն հասկացությունների կարևորությունը, որոնց ուսումնասիրության համար անհրաժեշտ են գիտելիքներ հնչյունաբանության և հնչույթաբանության ոլորտներից:

Linguists study the way in which English has evolved from its early form (Old English) to its current form (Late Modern). This is called **DIACHRONIC APPROACH**.

Այս օրինակում եզրույթի ներմուծումը իրականացվում է միաժամանակ հարազրույթային երկու միջոցով՝ թավատառով և մեծատառերով:

- *Եզրույթը բացատրելիս:*

For linguists, **GRAMMAR** is a study of the **organization of language**.

(Thorne 1997:3)

Այս օրինակում ինչպես եզրույթը, այնպես էլ եզրույթի բացատրությունը տրվում են թավատառով՝ ընթերցողի ուշադրությունը գրավելու նպատակով:

- Հոմանիշային եզրույթը ներմուծելիս:

COPULA VERBS (or copular verbs)

(Thorne 1997:7)

Այստեղ փակագծերում նշված է եզրույթի հավասարագոր հոմանիշը:

- Կիրառվող եզրույթը հապավելիս:

NOUNS (N) are traditionally known as **naming words**; they name people, places and things: You can test a word to see whether it is a noun...

(Thorne 1997: 4)

The writing of Old English was much reduced, and when we look at written evidence for the language from about 1150 to 1450 (**Middle English**), we find marked difference from Old English in spelling, as well as changes in vocabulary, word-forms and grammar.

(Freeborn 1986: 27)

Հեղինակը նշում է, որ 1150 – 1450 թթ. միջև ընկած ժամանակահատվածում անգլերենի ուղղագրության, ինչպես նաև բառային և քերականական համակարգերում զգալի փոփոխություններ էին տեղի ունեցել՝ հին անգլերենի համեմատությամբ, և թավատառի ու փակագծերի օգնությամբ ճշգրտում ենք, որ խոսքը միջին անգլերենի մասին է:

Թեև շեղագրի և թավատառի նպատակը գրավոր խոսքի բովանդակության հստակեցումն ու պարզաբանումն է, այդ միջոցների հաճախակի և ոչ պատշաճ կիրառումը, ընդհակառակը, դժվարացնում է տեքստի ընկալումը:

Եզրակացություն

Հետազոտական նյութի վերլուծությունը թույլ է տալիս ընդհանրացնել, որ գեղարվեստական և գիտական տեքստերը զգալիորեն տարբերվում են շեղագրի և թավատառի գործառնություններով և կիրառման հաճախականությամբ: Գեղարվեստական տեքստերում վերգրության այս միջոցները ապահովում են տեքստի հաղորդակցական ազդեցությունը, մինչդեռ գիտական տեքստերում շեղագիրը և թավատառը կատարում են սպասարկու-մետատեքստային գործառնություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Carey, G.V. (1976) *Mind the Stop. A Brief Guide to Punctuation with a Note on Proof Correction*. London: Penguin Books.
2. McCaskill, M.K. (1998) *Grammar, Punctuation, and Capitalization*. Hampton, Virginia: Langley Research Center.
3. Patt S. (2013) *Punctuation as a Means of Medium-Dependent Presentation Structure in English*. Tübingen: Narr Verlag.
4. Waller, H.W. (1980) *Graphic Aspects of Complex Texts: Typography as macropunctuation*. // *Processing of Visible Language* / Ed. by P. Kolers, ME Wrolstad, & H Bouma, Vol II, Plenum Press.

5. Адаева, О.М. (2003) *Семантика и метасемиотика знаков горизонтальной стратификации английской речи*. Дисс. канд. филол. наук. Самара: Самарский государственный педагогический университет.
6. Шубина, Н.А. (1999) *Пунктуация в коммуникативно-прагматическом аспекте и ее место в семиотической системе русского текста*. Автореф. дисс. ...докт. филол. наук. СПб: Российский гос. пед. ун-т им. А.И. Герцена.

ԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Austin, J. *Pride and Prejudice*. Available at: <<http://www.gutenberg.org/files/1342/1342-h/1342-h.htm>> [Accessed June 2013].
2. Austin, J. *Sense and Sensibility*. Available at: <<http://www.gutenberg.org/files/161/161-h/161-h.htm>> [Accessed June 2013].
3. Beckett, S. *All That Fall*. Available at: <<http://www.amazon.com/Collected-Shorter-Plays-Samuel-Beckett-ebook/dp/B0050164B8>> [Accessed June 2013].
4. Bennett, A. *The Great Adventure*. Available at: <<http://www.readbookonline.net/read/13756/33365/>> [Accessed June 2013].
5. Bronte, E. *Wuthering Heights*. Available at: <http://www.e-reading.club/bookreader.php/79616/Bronte_-_Wuthering_Heights.htm> [Accessed June 2013].
6. Conan Doyle, A. *The Hound of Baskerville*. Available at: <<http://www.gutenberg.org/files/2852/2852-h/2852-h.htm>> [Accessed June 2013].
7. Crystal, D. (1987) *A Pronounced Change in British Speech*. // Practical English Teaching, September.
8. Freeborn, D. (1993) *Varieties of English*. London: Macmillan.
9. Galworthy, J. *Defeat*. Available at: <<http://www.readbookonline.net/books/Galworthy/206/>> [Accessed June 2013].
10. Joyce, J. *Dubliners*. Available at: <<http://www.gutenberg.org/files/2814/2814-h/2814-h.htm>> [Accessed June 2013].
11. Maugham, S. *The Letter*. Available at: <<https://archive.org/details/letteraplayinthr008055mbp>> [Accessed June 2013].
12. Partridge, E. (1953) *You Have a Point There: A Guide to Punctuation and its Allies*. London & New York: Routledge.
13. Shaw, B. *Misalliance*. Available at: <<http://www.gutenberg.org/files/943/943-h/943-h.htm>> [Accessed June 2013].
14. Spark, M. *The Prime of Miss Jean Brodie*. Available at: <http://www.e-reading.club/bookreader.php/1013248/Spark_-_The_Prime_of_Miss_Jean_Brodie.html> [Accessed June 2013].
15. Stoppard, T. (1993) *Arcadia. A Play in Two Acts*. London: Faber and Faber, Ltd. .
16. Thorne S. (1997) *Mastering Advanced English Language*. New York: Palgrave.
17. Wilde, O. *The Importance of Being Earnest*. Available at: <<http://www.hoboes.com/FireBlade/Fiction/Wilde/earnest/>> [Accessed June 2013].

Особенности функционирования курсива и жирного шрифта в художественных и научных текстах

Супраграфические средства курсив и жирный шрифт играют важную роль в текстах художественного и научного регистров: они участвуют в оформлении семантической структуры текста и обеспечивают его адекватное восприятие и коммуниктивно-прагматическое воздействие. Функции, выполняемые курсивом и жирным шрифтом, по-разному реализуются в художественной прозе, драме и научных текстах.

Specific Features of Functioning of Italic and Bold in Belles-Lettres and Scientific Texts

Italic and bold supraphemic means play an important role in belles-lettres and scientific texts: they put up into shape the semantic structure of the text and facilitate the adequate perception and communicative-pragmatic influence. The functions of italic and bold differ in belles-lettres, dramatic and scientific texts.